ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ
«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 6. Ռեգիստրում անձնական տվյալների կուտակման աղբյուրները
(վերնագիրը փոփ. 18.05.15 ՀՕ-57-Ն)

1. Համապատասխան բնագավառների լիազորված պետական մարմինները ռեգիստր վարող մարմիններին պարտավոր են տրամադրել բնակչության անձնական հաշվառման տվյալներ՝

1) Հայաստանի Հանրապետությունում ծնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ.

2) Հայաստանի Հանրապետությունից դուրս ծնված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց վերաբերյալ.

4) Հայաստանի Հանրապետությունում ծնված, սակայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհամարվող այն անձանց վերաբերյալ, որոնց ծնողները բնակվում են Հայաստանի Հանրապետությունում.

5) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների վերաբերյալ.

6) Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած անձանց վերաբերյալ.

7) Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ.

8) Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած անձանց վերաբերյալ.

9) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացած անձանց վերաբերյալ.

10) Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձանց վերաբերյալ.

11) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս 183 օրից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները (դրանց ենթակայության տակ գտնվող հիմնարկներն ու կազմակերպությունները) անձնական հաշվառման տվյալները տրամադրում են համապատասխան տեղական ռեգիստր վարող մարմնին, իսկ պետական կառավարման լիազորված մարմինները՝ կենտրոնական ռեգիստր վարող մարմնին:

3. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, օրենքով նախատեսված դեպքում՝ նաև իրավաբանական անձանց և կենտրոնական ռեգիստր վարող մարմնի միջև օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների փոխանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: